«ԱՐԱՐԱՏԻ» ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«Արարատ» ամսագրի վերջին համարում տպուած է Հ. Մեսրովպ վարդապետի մի յօդուած «Ներսէս Ե. կաթուղիկոսի կոնդակները» վերնագրով, ուր խօսելով նաև իմ հրատարակութեամբ լոյս տեսնող «Դիւան Հայոց պատմութեան» ժողովածուիս մասին՝ նկատում է թէ «համանման աշխատութեան համար թէ աւելի պատրաստութիւն է հարկաւոր և թէ մանաւանդ աւելի մեծ շրջանի աջակցութիւն»։ Այս նկատողութիւնը մեծ բաւականութեամբ արտատպել է «Մշակը»։

Բոլորովին ճիշտ է նկատում Հ. Մեսրովպը, որ ամեն գործ պէտք է պատրաստ մարդու ձեռքով կատարուի, այսպէս օրինակ, պատմական նիւթեր ժողովող և հրատարակողը պէտք է այն լեզուն լաւ գիտենայ, որով հրատարակւում է նա. և մենք ոչ աւելին ենք անում, եթէ ոչ միմիայն ժողովում ենք ու հրատարակում հում նիւթեր մեր ազգային պատմութեան վերաբերեալ և կարող ենք Հ. Մեսրովպի հետ հայագիտութեան մէջ քննութեան մտնել։ Բայց աշխարհ դղրդացնել գերմանական ուսումով և գերմաներէնից թարգմանել Գելցերի բիւզանդեան պատմութիւնը՝ առանց բնագիրը հասկանալու և անհասկանալի հայերէնով— սա արդարև պատրաստութիւն չունենալու նշան է։

Այո, ամեն գործի համար մարդ պէտք է պատրաստուած լինի և գործի առանց կեղծիքի, առանց ռէկլամի և առանց ցուցամոլութեան։

ԳԻՒՏ Ա. Ռ. ԱՂԱՆԵԱՆՑ

«ԼՈՒՄԱՑ» ՆՈՒԻՐՈՂՆԵՐ

Արժ. Մեսրովպ քահ. Տէր Ոսկանեանցը 2 օրինակ «Լումայ» ստորագրուելով՝ մի օրինակը թողել է Խմբագրութեանս անօրէնութեան, որ որոշուեց ուղարկել Հալէպի հայ ուսանողութեան։

Մեծ. պ. Գ. Արաքելեանցը ստորագրուելով «Լումայի» 3 օրինակ, 1 օր. թողել է մեր տրամադրութեան. որոշեցինք ուղարկել Թիֆլիսի տիխնիկական դպրոցի հայ աշակերտներին։

Ներկայ համարից սկսում ենք տպագրել «Լումայի» յաւելուածի բաժնում Էդուարդ Բէլլամիի յայտնի «Հարիւր տարուց յետոյ» ռօմանի հայ թարգմանութիւնը, որ կատարել են պ. պ. Ղ. Աղայեանց և Ռ. Խանազատեանց։ Ցարգելով պ. Աղայեանի ցանկութիւնը՝ իբրև նոր ուղղագրութեան հեղինակի՝ մենք այդ թարգմանութիւնը տպում ենք անփոփոխ՝ նորա իսկ ուղղագրութեամբ։

«Լումայ»-ի անցեալ տարուայ վերջին համարներում տպուած բժշ. Լ. Ցիգրանեանի «Գերմանական Դարպատ համալսարանը և նորա հայ ուսանողները» յօդուածի մէջ սպրդել է մի սխալ։ Դաղոխեանի մասին տպուած է թէ «նա ունէր կաշեացի բնաւորութիւն», պէտք է լինի «նա ունէր կծող բնաւորութիւն»։

«Լումայի» այս համարի հետ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին տեղւոյն «Գուտտեմբէրգ» գրավաճառանոցի հայերէն գրքերի փոքրիկ գրացուցակը։

Մեր աշխատակից պ. Մուրացանի տկարութեան պատճառով նորա «Վահան Գողթնացի» պատմական վէպի տպագրութիւնը յետաձգւում է մի առ ժամանակ։

Քաղցր պարտք եմ համարում սրտագին շնորհակալութիւնս մատուցանել բաղմահմուտ և անշահասէր բժշկապետ պ. Յակոբ Ադամեանցին, որ իրեն յատուկ անձնուիրութեամբ և հայրական խնամատարութեամբ ազատեց իմ զաւակ Երուանդեկի կեանքը ծանր և վտանգաւոր հիւանդութիւնից։

ԴԻՈՑ Ա. Ռ. ԱՂԱՆԵԱՆ